սը, որից վրէժ է խնդրում, եւս օտար ոմն չէ: 13 ամսեայ բանտարկութիւնը նոյն կարգի այլաբանութիւն է, ինչպէս Զալմոքսի եռամեայ անհետացումը եւ ակնարկում է հողի տարեւոր հանգստին:

Ասել է, թէ Արէսին եւս յատուկ էր քնելու կամ մեռնելու եւ յառնելու կարողութիւնը: Կերամոս քաղաքում, որ Արէսի բանտարկութեան տեղն էր, պահւում էր նրա աճիւնը — ապացոյց, որ նա տեսել է մահ եւ կենդանացել (Mueller, Mythol, II 50):

Բոլոր այս դիտողութիւնները, որ այնպէս բնորոշ են Ատիս-Ադոնիսեան տիպարի աստուածութեան, թելադրում են ընդունել, որ Արէսն եւս սկզբնապէս, իր երիտասարդ օրերին, նոյն դասի աստուած է եղել: Բանի որ հայ Էր-Արան էլ նման բնութիւն ունին, եւ երկրնքից ընկնելուց յետոյ շարունակել են երկրի վրայ պահել իրենց հինաւուրց նկարագրի ամենակարեւոր գիծը, ոչ մի արդելք չկայ մտածել արենակցութիւն տեսնել Էր եւ Արէսի մէջ:

Շատ նշանակալից է, որ երկուսն էլ աղերս ունին շան հետ: Շունը համարւում էր Արէսի նուիրական կենդանի, որպէս պատերազմի դաշտի դիակների անխուսափելի այցելու:

Ցունաստանի մի քաղաքում շուն էին զոհաբերում Ենիալին, աւելի ճիշդ շան ձագ (Պաւսան, Գ. 14,9), իսկ Ենիալը նոյն Արէսի պատկերն է:

Արային կենդանացնողը Արալէզը կամ Առլէզն էր, որ յառաջ էր եկած շանից, ինչպէս վկայում է մատենագիր Եղնիկը:

Զենք կարծում, որ հին հաւատալիքով բոլոր դիակները անխտիր մատչելի համարուէին շների լափին: Արէսի հակառակորդներին էր անշուշտ վիճակուած անարդ կուր լինել շներին: Նրանք, որ ընկնում էին կռուի դաշտում, վայելելով Արէսի հովանաւորութիւնը իբրեւ նրա կողմնակիցներ, արժանի պիտի լինէին այլ բախտի: Շները նրանց չէին լափում, այլ Արէսի հրամանով լիզում էին ընկածների վէրքերը, բուժում այդ ընտրեալների խոցերը եւ վերակենդանացնում: Առլէզները այսպիսով քարի շներ են եւ գործ ունին հերոսների, այսինքն՝ Արէսի սիրելիների հետ:

Նմանութիւնը աչքի է ընկնում եւ այլ կէտերում:

Ինչպէս ը սեմական Թամուզն ունէր իր համանուն Թամուզ ամիսը տարուայ մէջ, երբ սօնւում էին նրա հանդէսները, այնպէս էլ Արէսին յատկացուած էր որոշ ամիս: Թեսալիայում զարնան ամիսն էր, որ կոչւում էր Արէյոս, Բիւթանիայում՝ ամառուայ ամիսը: Բուսականութեան ոգին հակում ունէր դէպի զարնան մեղմ արեւը կամ դէպի լուսինը, որի շողերը այնքան բարերար էին համարւում բոյսերի համար, եւ կամ դէպի արեւը, որի կիզիչ ճառագայթները ե՛ւ կենսատու ե՛ւ կործանարար էին նկատւում: Այս հետեւանքով տօները կատարւում էին զարնան եւ կամ ամառը:

Թւում է, որ հայ Էր-Արան եւս իր յատուկ ամիսն է ունեցել, եւ թերեւս այնպիսի ծագում ունի հայ տօնացոյցի Արաց խորհրդաւոր ամիսը:

Ատիսի սրբազան ծաղիկն էր մանուշակը, բուսած նրա արիւնից: Ադոնիսն ընտրել էր պուտ ծաղիկը, (անեմոն): Հայերէնում յիշւում է արանց ծաղիկ, որ գուցէ ուղղելի է արաց, եւ կապ ունի Արայի անուան հետ, առայժմ դաղտնի:

Դիցաբանական մերձաւորութիւնը յայտարերելուց յետոյ անտեղի չէ հարց դնել, արդեօք Արէս եւ Էր-Արա անունների մէջ եւս ազգակցութիւն չկա՞յ:

Վելկեր գիտնականը, որը համարում էր Արէսին աստուած հրատապ արեւի, ինչպէս յիշեցինք վերեւ, հնարաւոր էր գտնում նաեւ ստուգաբանօրէն կապել արէս՝ հայ արեւ բառի հետ:

Տակաւին վիճելի է, արդեօք արէս հինդեւրոպական բառ է, թէ թրակեան ժառանգութիւն է նախնի բնակչութիւնից:

Արէսի պաշտամունքը տարածուած է եղել Թրակիայից մինչեւ Փոքր Ասիայի արեւելեան ծայրերը, ոչ միայն Մակեդոնիա, Թեսալիա, Ցունաստան, այլ եւ Փոքր Ասիայի երկիրները մանաւանդ Բիւթանիա, Պամփիլիա, Կարիա, մինչեւ Կողքիս եւ Հայաստան: Կիրասունի դէմ «Արէսի Կղզի», Արեսիաս քաղաքը եւ «Արէսի Պարտէզ», որ էր Կողքիսում ապացոյց են որ Արէսն ընտանի է եղել մերձակայ Պոնտոսի ափերին: Արէսի պարտէզն այն